



ՀԻՉՈՐՈՒՄԻ ՄԵՅՈՒՆ

Զաղաքային «Կումարի» օրաթերթի հավելված

1991 թ. փետրվար: № 15: Գինը՝ 50 կոպ.

ՇԻՐԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅՈՅ ՊՈՄՊԵՅԸ

(Սկիզբը՝ «Հիշողության» № 14-ում)


Հայ են՝ հայրենարափ թեկուզ լինենք,
Պիտի բեզմենք՝ աբկվենք,
Պիտի մահը հեբենք,
Պիտի ապրենք, ապրենք
Եվ հայ պիտի մնանք ու հար լինենք...
Հայ ենք

Ու հայ պիտի մնանք՝
Բույրով, բույրով, զույնով արմենական,
Հայոց ոգով, ոհով, լեզվով արեալական,
Ֆիդայական երգով, վերևով դեռ մթացող
Մեր ֆաբրով ծաղկող...

Հայ ենք ու հայկական ոգով մեր մաքանչող՝
Մոխրենքից պիտի փյունիկի պես հառնենք,
Կերտենք մեր բերդախար տունը հավերժական,
Որ ծխանի ծուխը լավաշ հացի բույրով՝
Երկինքն ի վեր հայոց իրկվելով ելնի,
Բնչպես խորհուրդ կյանքի...

Հայոց տունը պիտի կերտենք մենք դարերի համար,
Որ սեպ-սեպագրքի ժայռերն ի վեր հայոց,
Մեր ինքնուրյան, լինելիության պատմությունը անհեջելի՝

(Ծարունակությունը՝ Յ.րդ Էջով)





Քաղաքի գործկոմի՝ առաժնային այնքան ամբարձու ու գեղեցիկ շենքը հնարավոր չեղավ փրկել: Լուսանկարը՝ ՀՄ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ



ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՓԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԿՅՈՒՐԵՆՅԱՆ ԱՆԻ ԺՈՐԱՅԻ

Ինչքան էլ ծանր է հուշերս մեկ-մեկ ժողովելը, այնքան էլ անորիշ է կարոտս արտահայտելը: Օ՛, դու դաժամ ակրնթարթ: Մի՞թե կարելի էր այդ և մամուկ ուրանալ, այն էլ այդքան դաժանորեն, որ մուլմուլ հողածին մարդ արարածը չար ծանամար մայր հողին: 1985-ի դեկտեմբերի 7-ին թանձր մշու շից մայրդ արփին կենդանության իր վերջին շողերը խմայեց 29-ամյա ԱՐՓԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ և 6 տարեկան ԱՆԻ ԺՈՐԱՅԻ ԿՅՈՒՐԵՆՅԱՆԻ խաղաղ, փթթում կյանքից: Արփիկը ավարտել էր Մ.



Նախանդամի անվամբ պետական մանկապարծկան ինստիտուտի երգ-երաժշտության ֆակուլտետը և դասախոսելու էր երաժշտական ձև 1 դասընթաց: Արփիկը սիրելի կին էր, եռանդուն տանտիրուհի, ամենաբարի և աշխատի ամենալավ մայրը: Ինչքան աղջիկներ ու հարսներ չհասցրեցին մայրանալ, ինչքան մայրեր տեղատարառի քարե կարկուտներ ի տակ բազուկներով կրծքին էին սեղմել ծագուկներին... Ինչո՞ւ էր մեղավոր այն քրեքուշ, նշամե աշիկներով աղջնակը, որ դեռ իր երկնագույն պատկերազոյր կյանքի երազներում երփներանգ ծաղիկներով գեղեցիկ պսակ էր հյուսում և ոսկեմամերին դրամ անվերջ պարում էր:



ԳԱԳԻԿ, ՇԱՎԱՐՇ, ՕՅԵԼՅԱ (ՄԱՆՈՒԿՅԱՆ) ԲԵԿԷԱՆՅԱՆՆԵՐ

Գագիկն ու Օֆելյան ուղիղ 30 տարեկան էին, երկու զավակների սիրազորով ծնողներ, ծիլ ափող, երջանիկ մի հայ ընտանիք: Զար պատահականությամբ ազատի օրը տանն էին, նոր ստացած իրենց առաջին ու վերջին պետական բնակարանում, գերիզման զարծա՛լ բարձրահարկում: Տանն էր երանց երկամյա որդին՝ Շավարշի կը, նաև Գագիկի հորեղբոր որդին: Ու շորսն էլ զոհվեցին փրկություն խոստացող, սակայն իրականում խաբիսույ



կառուցած աստիճանահարթակում... Գագիկն ավարտել էր պոլիտեխնիկական ինստիտուտը: Մտառայել էր բանակում, վերադարձել ու աշխատանքի անցել գույպա-նասեղենի արտադրական միավորումում, նախ՝ բրիգադավար, հետո՝ հերթափոխի պետ: Ու զարոցից հետո Օֆելյան ավարտել էր Լենինականի հաստոցաշինական տեխնիկումի ջիմիական բաժինը, աշխատանքի անցել էլեկտրակենցաղ սարքք գործարանի լաբորատորիայում: «Մեր Գագոն» աշխատանքային ավագ ու կրտսեր ընկերներն այսպես էին ան



վանում Գագիկին, այդ երկու բառի մեջ զննելով մեծ իմաստ—սեր, վստահություն և հարգանք: Ակտիվ էր, նախածնունդ... Աշխատանքում, հարազատբարեկամների ու հարեկանների շրջապատում հարգված էր նաև Օֆելյան, սիրելի հարս: Բեկչանյանների երիտասարդ այս ընտանիքից հերթափոխով փրկվել է վեցամյա Քրիստինեն, որ մեծանալու է առանց ծնողական խնամքի: Քող երկնային խաղաղություն իջելի մեր շիրիմներին, Գագիկ, Օֆելյա և փոքրիկ, անմեղ Շավարշ...



ԵՐԵՎԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ Հաճելի գույգ էին ՌՈՒԲԵՆ և ՄԱՐԻՆԵ ՎԱՐԳԱՆՅԱՆՆԵՐԸ, որոնց տաք օջախը ցնծում էր իրենց փոքրիկի՝ ԷՊՈՒԱՐԳԻ (ծնված 1985թ.) ուրախ, աշխույժ ծիծաղով: Ռուբենը աշխատում էր Հաղեկեղաբերականատոր արտադրական միափորումով որպես ավագ վար-

պետ: Նա ավարտել էր Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղը, իսկ կինը՝ Մարինեն, աշխատում էր ամուսնու հետևում գործարանում, սիրում էր իր աշխատանքը՝ հաշվապահություն: Ռուբենը ու Մարինեն հակում ունեին մորը ստեղծե-

լու, իրենց գեղեցիկ մտախոհությունները իրականացնելու, ամեն տեղ սեփական աշխատանքով թարմություն ու նորություն մտցնելու առումով: Նույն ոգով էլ դաստիարակում էին իրենց երեխաներին: Աղետի օրը Վարդանյանների ընտանիքը նախաճաշում էր սեղանի շուրջ բոլորած, երբ... Փրկվում է միայն ավագ որդին:

ՀԱՅՈՑ ԴՈՄՊԵՅԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ի յուր դարի և դարերին գալիք...
 Եվ բող լավ իմանան շարակամները մեր
 Եվ օղ անեն իրենց երկար պահպանելին,
 Երբ եղավ երկրաշարժը հայոց հողի,
 Ոգու երկրաշարժը չի լինելու երբեք:
 Ոգու երկրաշարժը չի լինելու երբեք,—
 Սա է Կենաց ծառի արմատը մայր,
 Որը հայոց անմեռ ափիչը կենարար՝
 Ցեղիս երակներով մղում է զեռի պես,
 Դեպի մարմինն Հայոց—հողը Հայոց՝
 Մասիսների երկնյալ սրտի գոռ զարկերով,
 Եվ զանգերով մասիսների պիտի մենք ղողանջենք—
 Հայ եեն, հայ եեն, հայ եեն,
 Կանե՛ն ու պիտի լինենք...

Այսպես միայն այսպես պիտի ապրենք,
 Քեկուզ մենք զարձիկ ենք աղբն երկրաշարժի սեռունդ,—
 Քեկուզ աղետյալ ենք տնով-տեղով,
 Քեկուզ սգավոր ենք ազգոտակով,
 Քեկուզ բաղիկ ենք մենք հազար-հազար բաղիկ,
 Հազար-հազար երազ, ու բյուր հազար գալիք,
 Հազար-հազար երբայր, հազար-հազար փայլիկ,
 Հազար-հազար մայրիկ, հազար-հազար հայրիկ,
 Հազար-հազար մամիկ, հազար-հազար պապիկ,
 Հազար-հազար օրոցք ու բյուր հազար երգեր,
 Դարձյալ հազար-հազար ծաղիկ ու սեր...

Այնպես եղավ, որ ես,
 Երկրաշարժի պանին,
 Հայտնվեցի Ցոք-վերկ եկեղեցու կողմին:
 ...Մի դիվային դղիող սասանեց ինձ,
 Հողը ցնցվեց-հանվեց ոտներիս տակ
 Ինչպես տախտակամած,
 Որ նետված է փոթորկալից ծովի բացերի մեջ...
 Գլխապտույտ, փոշի, քափվող շենք ու ֆաբեր,
 Ճախյուններ ու սուլոց, պտուտահողմ—
 Աշխարհը շուտ եկավ ու երկինքը փլվեց,
 Աշխարհը շուտ եկավ ու երկինքը մթնեց...
 Պահի ակնբարբում—

Ես ինձ գտա փողոցի կենտրոնում
 Ու փորձեցի ծուկն զարկել գետեին,
 Որ չման ֆաբ կարկուտի տակ,
 Բայց անհեռ եղավ.—
 Երբ գետինը բեկվում էր աչ—
 Գլուխով զարկվում էի փողոցի աչ պատին՝
 Երբ գետինը բեկվում էր ձախ,
 Գլուխով զարկվում էի փողոցի ձախ պատին՝
 Խույ-ընդգետնյա զոռզոռոցից սահմուկելով:
 Եվ մի պահի՛ կարծես ցնորի մեջ
 Տեսա օդում կախված գլուխը Ցոք-վերկի...
 Ու հիշեցի ծածկը 26 րվի...
 Զարգանդ եկավ վրաս,
 Ու նոր՝ ես վախեցա...

Վայրկյաններ էին դրան,
 Ակնբարբներ շատ կարե
 Եվ ամեն ինչ արգեն վերջացել էր...
 Հետո՞ ես վագեցի,
 Խելակորույս ես վագեցի դեպի դպրոց...
 Ախ, սե ֆաբով շարված,
 Ավերակված-խեղված,
 Սե շիբմաբար դարձած դասարան ու դպրոց,
 Զգայ-շհասենի,

Կուրանայ-շտեսենի...
 Արյուն, լույս ու բանալ խառնվել են իրար,
 Քարիկ, աշիկ, ծամիկ խառնվել են իրար...
 Ես այս ինչ եմ տեսնում,
 Այս ինչ բան է աստված,—
 Մայրեր, մայրեր, մայրեր,
 Փլատակների մոտ արգեն փլատակված...
 Մուխը, բոցը, փաշին խառնվել են իրար,
 Հազար-հազար ձեռքեր ճանկոտ են հողը,
 Ճանկոտ են ֆաբը՝ բառաշեղջուր անբառ,
 Ու հանում են—տանում ծաղիկ—մանուկներին...
 Ու հանում են տանում,
 Ու հանում են—տանում ԱՆՏԱՆԵԼԻՆ...

Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,
 Եվ ի բոցոյն վագեր խառնեալ պատանեկիկ...
 Բայց էլ չէին վագում,
 Էլ չէին վագում երանե,
 Որոնք մի պահ առաջ՝
 Դեռ հեզում էին այր, բեն,
 Հայոց անուշ լեզուն կարկաչելով,
 Որոնք մի պահ առաջ՝
 Դեռ երզում էին ֆիդայական երգեր,
 Հայոց երազանքը աչիերի մեջ,
 Ու ձեռքեր արեի պես պարզելով վեր

(Օտրունակությունը՝ 4-րդ էջում)



ՎԱՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՎԱՐՊԱՆՑԱՆ

ՎԱՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՎԱՐՊԱՆՑԱՆԸ Բ. Ղարիբջան լամի անվան դպրոցի սիրված ուսուցչուհիներից էր: Մի րում էր նա մանկավարժությունը: Միշտ բարի, ներողամիտ ծախտով խորհուրդներ էր տալիս թե փոքրերին և թե մեծերին, սերմանելով բարություն, ազնվություն, հավաստիություն:

Մեծ աղետից հրաշքով փրկված ուսուցչուհիները ափսոսանքով էին հիշում նրան, պատմում էին, որ այդ օրը Վարդը երազին տեսել էր իր և ամուսնու հարսանիքը: «Մա ինչ երազ էր,— ասել էր նա: — 2Է՝ որ ես իմ Կարենին եմ ամուսնացնելու»: Եվ չմայած տեսած չարագուշակ երազին, այնքան ուրախ էր նա. այդ շարքս կապանալու էր իր միակ որդու նշանադրությունը: Բայց երազն այդ լուր խաբկանք էր և չարագուշակ մահվան ճիրանները խեղճն սիրելի մայրիկի քաղցր երազները:

ՄԿՐՏԻՉ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՅՐՈՒԲԵԼ ԱՐԱՄԻ ԿԱՐՇԻԿՅԱՆ

ՄԳՎԵԼ է 1935 թ. մարտի 26-ին, ծառայողի ընտանիքում: Աշխատում էր կոշիկի ֆաբրիկայում որպես գլխավոր մեխանիկ: Ազնիվ, ճշմարտասեր ըն-



կեր էր, հոգատար և նվիրված ամուսին: Կիսում էր զավակներ թի ուրախությունները և տխրությունները, հպարտամտ նը լուսնը հաջողություններով:

Ֆորթիլը հերթական արձակուրդի մեջ էր և զբաղված էր որդու նշանադրության հետ կապված հաճելի հոգսերով: Արդյոք գիտեր, որ երկրաշարժը պետք է դաժան հաշվեհար դար տեսներ և Ռոջս ցնդեցներ հայրական տուրք զգացմունքն թի իրականացման հնարավորությունը:

«Կիսատ գործս որդուս թողի, բացատրելու ծամ չմնաց...»: սիրում էր այս երգը և ինչ իմանար նա, որ այս երգի իմաստուն բառերը դառնալու են նա կատարական:

Օ՛, ինչքան տարբեր են մարդկային ճակատագրերը: Ապրում ենրոպ փնտրում էինք ամեն տեղ, հարցնում բոլորից և հույսով սպասում, որ իման ուր որ է, կվերադառնա: Բայց օրեցօր օժազգար դաժան մտքերը խեղ դում էին, համզիստ չէին տալիս մեզ հաշտված ճակատագրի ողբերգության հետ: Յ ամիս շարունակ շնչում էինք... Գոնե գտնեինք: Մի՞թե քնության քոթը ցավերին կարելի է հնազանդորեն դիմանալ ու ամենույս ապրել: Անհույս ապրելը ինքնին ավարտված ողբերգություն է:

ԿԱՐՈՒՆ ԿԱՐՇԻԿՅԱՆ



ՆԱՐԻՆԵ ԿԱՄՈՅԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ—1962 թ.
 ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՄՈՒՇԵՂԻ—1985 թ.
 ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԲՔՈՐ ՄՈՒՇԵՂԻ—1987 թ.



ԱՆՏԵԼԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անձեկա... Չեմ կարող առանց արտասուքի արտաբերել անունը քո, իմ թանկագին, անմոռաց աղջնակ:

Անձեկա... Քո անունն իսկ համբուկում էր էությանդ՝ անմեղ հրեշտակի Դու ծնվեցիր 1977 թվականի օգոստոսի 2-ի առավոտյան, հրճվանք ու բերկրանք պարզանելով մեզ, և դու նման էիր այդ օգոստոսյան շինչ առավոտին, միշտ ծպտուն ու ծիծաղկոտ:

Մենք ամեն օր հրեշտակում էինք քո արտաբերած նոր բաներով, քո առաջին քայլերն անդամ խակական տուն էին մեզ համար: Սեպտեմբերյան մի առավոտ քեզ նանապարհեցիք № 23 դպրոց: Ինչպիսի՞սի՞ երազանքներ ու հույսեր էին պարփակում քո մատաղ հոգին:

Հիշում եմ ինչպիսի անհամբերությամբ էիր սպասում բնակարանամոտին, հոգու ինչպիսի թրթրով էիր զստավորում ամեն մի իր, մաքրում ու սրբում կրկնակի անգամ: Եվ չգիտեիր, որ մի օր այդ բնակարանի պատերն անկարող կլինեին քեզ պաշտպանել և որ հենց այդ բրնակարանի էր զանալու մատաղ հոգուտ գերեզման:

Եվ հիմա, երբ շկաս, մենք կարծես որբացել ենք, մեր տունը նման է լեզվակր պոկած զանգի, ուր այլևս չի հնչում քո ձայնը, ուր չի լսվում քո զրեզուն ծիծաղը: Դու չիմացար, որ քո մատաղ կյանքը շարունակություն դառավ նորածին Անձեկայի մեջ:

Գիտեմ՝ շկաս, բայց չեմ հավատում: Անձեկաս, դու կաս իմ հոգու խորքում: Եվ քանի մենք կանք, շնչում ենք, կայրենք, քո հիշատակը միշտ վառ կըպահենք:

Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանի տեսական բաժինը գերազանց զեռահատակներով աչարտեղուց հետո նարինե Ղուկասյանը աշխատանքի անցավ արվեստի դպրոցում: Մի րում էր նրան կուրսերը, հարգում աշակերտներն ու նրանց մեղեցիկները: Նա ինքը երաժշտություն էր, մեղեցիկ՝ մեկ մեղմ, հանգիստ, մեկ հախուռն, աշխույժ... Նա զոհ էր իր ճակատագրից, ուներ լավ բնատեղի, երկու սալաբերականներ, սիրված մաս

նագիտություն: Նա ապրում էր երաժշտության ու մանուկների մեջ: Նա երջանիկ էր: Ավա՛ղ... Հենց այդ երանելի պահերից մեկն էլ անշարժացավ, կանկ առան բոլոր ժամացույցները... Չկար նարինեն՝ սիրասուն մայրը, սիրող կինը, հմուտ ու նըվիրված մանկավարժը, այլևս չկար գեղեցիկ աչքերով այդ հայուհին: Նրա հետ անվերադարձ ճամփա ընկան նաև երկու սիրասուն բալիկները՝ Սերգեյն ու Աբթուրը... Հանգստություն մեզ, անմեղ հաստակներ:



ՀԵՐՄԻՆԵ ԼՅՈՒՆՎԻԿԻ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է Լեհիսկայի քաղաքում 1969 թվականին, սովորել Մ. Մաշտոցի № 29 դպրոցում, նաև № 4 երաժշտական դպրոցում: Ավարտելուց հետո նույն տարում ընդունվում է Լեհիսկայի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի մեթոդիկայի բաժինը: 3-րդ կուրսում էր, երբ վրա հասավ դաժան աղետը, որը խլեց նրա մատակցող կյանքը՝ անհուն վիշտ պատճառելով ծնողներին, հարազատներին:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌԱԶՄԻՎԻ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1958 թվականին, սովորել և ավարտել է № 29 միջնակարգ դպրոցը: 1978 թը վականին վերադառնում է բանակից ու ցանկանում շարունակել ուսումը, երազում էր դառնալ շինարար և կառուցել հարազատ քաղաքը: Թեև դժվարությամբ, սակայն աշխատանքային և ուժեղ կամքի շնորհիվ ընդունվում է շինարարական տեխնիկում, որն ավարտելուց հետո անցնում աշխատանքի էլեկտրատեխնիկական գործարանում: Դեկտեմբերի 7-ին զոհվում է 10 ամսական տղայի հետ Կոչ տղյանի № 1 շենքի փլուզման պատճառով:



ՊԱՏՄՈՒՄ Է ՀՈՐԱՂՈՒՅՐԸ
ՎԱՐՆԵՆ ԵՎ ԿԱՐԵՆ
ԿԱՐՆԵՆԻ ԱՆՐԻԿՅԱՆՆԵՐ

№ 35 դպրոցի 3-րդ և 4-րդ դասարանի աշակերտներ էին երկուսն էլ: Երկու եղբայրներ, որ սեմնորեք միասին էին լինում՝ դպրոցում, գրասենյակ, որն է տեղ մեկնելիս: Եվ իզուր չէին ասում, որ ոչ մի բան, նույնիսկ ժամանակը չի կարող բաժանել նրանց: Այդ մասին գիտեին և իրենք ու զոհունակ ժպտում էին լսելով ուրիշներից: Այդ օրն էլ պատրաստ-



վում էին միասին դպրոց գրանալ, չնայած մայրը վատ երազ էր տեսել և խնդրել ամուսնուց դպրոց չուղարկել երեխաներին: Այդպես էլ եղավ. դպրոց չգնացին, բայց միջազգային կյանքից հեռացան տանը...

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՍՅԱ
ՌԱԶՄԻՎԻ

Ծնվել է 1981 թվականին, սեպտեմբերի 13-ին, սովորել № 29 միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո աշխատել է գույպա-նասկեղենի ֆաբրիկայում, որտեղ էլ հը-



րածելու սովեց կյանքին: Կյանքում շատ դժվարություն էր տեսել, բայց դիմացել էր բոլոր փորձություններին համբերությամբ ու մեծ կամքով: Վաղաժամ կորցրել էր ծնողներին ու միտքարվում էր իր ընտանիքով, իր սիրասուն երկու բալիկներով: Չար ճակատագիրը չթողեց, որ տաք մնա Այսպի օջախը, որ մեծացնի իր զավակներին, սարի մերանց ուրախությամբ: Չոհվում է աշխատանքի վաղուց՝ անտեղյակ որդիների ողբերգական կորստին:



ԿԱՐԵՆ ՄԵԼԻՔՈՆԻ
ՎԱՐՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1972 թվականի հունիսի 28-ին: Սովորել է Կրուպսկայայի անվան դպրոցի ավարտական դասարանում: Կամ էր սովորում, սիրում էր հատկապես մաթեմատիկական առարկաները: Ուսմանը զուգընթաց մեծ եռանդով նախապատրաստվում էր ընդունվելու Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը:

Ուշիմ և աչքացաց երեխա էր, տան սիրելին, հարգված էր ընկերների ու հարեանների շրջանում: Դեկտեմբերյան դժնդակ օրը կուրս պատահականությամբ տանն էր: Ախտորյանի շՔԲԷ կենտրոնում կառուցված հինգ հարկանի շինությունը չկարողանալով դիմակայել փորձությանը և շատերի հետ միասին անմեղ զոհ դարձավ նաև Կարեն Վարդանյանը:



ՆԱԴՅԱ ԿԱՐՈՒԾԻ
ՋԱՄԲԱԶՅԱՆ

Ծնվել է 1988թ. սայրիլի 18-ին: Սովորել է № 84 միջնակարգ դպրոցում, ապա ընդունվել և գերազանցության դիպլոմով ավարտել է Հացիկի սովխոզ տեխնիկումը: Դպրոցի հետ զուգընթաց գերազանց գնահատականներով ավարտել է № 6 երաժշտական դպրոցի քանոնի բաժինը: Խոսում ու խորհրդավոր աչքեր ուներ, որոնցով թափանցում էր մարդկանց սրտերը, հասկանում և ըմբռնում նրանց մտքերը: Տեխնիկումն ավարտելուց հետո դիմեց Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի ազնի գործակալ բաժին ընդունվելու, համար, շատացվեց: Վերադարձավ հաջորդ տարին սեղուկվելու մեծ ձգտումով: Աշխատանքի անցավ կոմպոզիտորների գործարանում: Ընդամենը 22 օրվա աշխատանքային կենսադրությունը ունեցավ: Հաջիվ 20 գարուն տեսած այդ շիկը թողեց ծնողներին և եղբորը խոր կսկիծի մեջ:



ՊԻՉԻԿՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
ԼԵՎՈՆԻ

Ծիշո են ասում, ե՞րբ է որբը խնդացել որ... Ծնվել էր օտարության մեջ՝ Այսպի երկրամաս, Ռուբենյակի շրջան: Մանկությունն անցել էր Ախալքալաքում: Մակատագրի դաժան խաղը շատ չի սպասեցրել. գրկվել է ծղոտից: Տան հոգսի տակ կրած, հեծարան, սատար է եղել քրոջ ու եղբոր համար: Այս դժվար օրերին Միքայելի ամենամոտ քարեկամը գրքերն էին, կարդում էր, կարդում, վշտի մոռացում ու լավ օրվա հույս փնտրելով: Չինվորական ծառայությունից հետո Միքայելը ընդունվել է Ռյազանի միլիցիայի քարծրագույն դպրոցը: Սակայն կյանքը ստիպել է կիսատ թողնել այն: Հետո ամուսնացել է, գրանցվել Լեհիսկայանում: Քաղաք, որ շատ էր սիրում, որն էլ իր համար գերեզման դարձավ:

ՀԱՅՈՑ ՊՈՄՊԵՅԸ

(Սկիզբը՝ 3-րդ էջում)

Վայրկյաններ են անցել, Իրենց ազնիվ արյան ժառանգական կանչով Ձի կոչում էին կոչը պապենական... Գարաբաղը մեռ է,—

Հիմա էս են կարել ու լուսն են ֆաբրի տակ ու՛ մայրերը հանկուս են ֆաբր... Այդուհետև, լույս ու բանալ խառնվել են իրար, Քարիկ, աչիկ, ծամիկ խառնվել են իրար, Տեղերն արշուճա են, տաներն արշուճա են... Մանուկ երեսուներ, Մանուկ երեսուներ, Ձեր գողգոթան եղավ դարձրոք ձեր... Դու՛ք, որ դեռ լցվում էիք զեղի երազանքով, Դու՛ք, որ զոզանում էիք ազգի ոգու երգով, Դու՛ք, որ սերբ բռնած, Կնույզների բամբին պիտի բռնեիք, Հիմա պառկած եք լուս... Մանուկ երեսուներ, Մանուկ երեսուներ, Կանառակված, Կափաղված ու հեղված, Երկար ու բնուեն ծուռ խաչերով խաչված... Մանուկ երեսուներ, Մանուկ երեսուներ, Ես ձեզ ինչպես ողբամ, Ես ձեզ ինչպես բաղնամ, Ինչպես ինչպես ես ձեզ խաչից... Որ հողը տամ գլխիս, Որ հողը տամ գլխիս, Որտեղի՞ց հող, Երբ էլ հող չմնաց անգամ մի բուռ, Որ մարդ գլխին ցանի,— Հողը գերեզման էր դարձել համատարած Ու շատերին անգամ չհերիքեց... Ախ-սե ֆաբով զարված, Ան չիմաֆաբ դարձած դասարան ու դպրոց, Դպրոց...

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)



ՄԵԼԻՔՈՆԻ ԾԱՐԻՆ
ԷԼԲԱԿԻ

Պուշկինի փողոցի № 26 շենքի 1-ին հարկում էր բնակվում մեր ընտանիքը: Աղետը չիմայեց ոչ մեկին, այդ թրվում մեր ընտանիքին՝ Ի բանակահին Օսկոնց տատիկին: Ծնվել էր նա Դարսի շրջանի փոքրիկ մի գյուղում, 1915 թվականին: Իր հասակակիցների նման նա անցել էր գաղ-

թի թափառակոն ճամփաներով, ճաշակել գրկանքներ, տեսել համաճարակներ, սով, թշվառություն: Օսկոնց Մելիքյանի հիշողություններում քաց էր 1941 թը վականի պատերազմի դաժան հեղաշրջանը: Ամուսինը՝ Պողոսը դուրս չմնաց այդ համաշխարհային սպանդի իրողությունից, մասնակցեց պատերազմին: Հետադարձվելու խառնությունը նրանց վառեց զոհ:

Նրա բույնը: Կյանքը շարունակվեց: Անցնող տարիների հետ կիճը երազեց թոռնիկներ, մանկյան ճիչ ու կանչ: Կատարվեց և այդ երազանքը: Կա հինգ թոռնիկների սիրված ու փայտալից տատիկն էր: Սակայն դարձանակալ աղետը կտրեց այդ կարճատև գեղեցիկ դաշտը իր սև ձեռքով և փլատակների տակից միայն թուրքու թուրք զանգեց Օսկոնց:

Հիմա թոռնիկները այցելում են գերեզմանատուն ու ծաղիկներ դնում սիրելի տատի շիրմին: Դատերազմի վտանգան Պողոսի արտևանալները մեկից սպիտակեցին: Կա իրեն զգաց մի նոր պատերազմի մեջ, որտեղ իր դեմ թշնամի չկա կանգնած: Ծերուցական վիշտը ծխում է քաղաքի, քանդված օջախի ու կյանքի հավատարիմ ընկերուհու համար:

ՇԻՐԱԿԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԿՈՆՆԵՐԻԴ ԶՈՈ ՏՈՒՐ...

1926 թ. կրկնաշարժին վշտակիր մայրս ասաց. «Տեր, մըռնիմ սրղի, քո զորութենին, մըր տուն ավիրեցիր, մեր հողին էրեցիր բավ է խնայի էրեմուն, էնի մըր հույս ու ուզվեցին է»: Իսկ 1988 թվականի դեկտեմբերի 7-ի ազատի ժամանակ, երբ կործանվեց ողջ քաղաքը և զոհվեցին հարյուր հազարավոր մարդիկ, ողջ մնացած կուսակցիցիները թողած իրենց անասիլի վիշտը, գոյում էին. «Աստված, փրկիր Օրևանը»:

Տեսնողը կզգա, շտենողն ի՞նչ կհասկանա...
... Ողջերը խելագարված իրենց փլված տների քարերն էին հեռացնում, որ հանեն հարազատներին...

Անտուն, զրկանքների ծովն ընկղմված կուսակցիցիներստացյալ ճակատագրի դեմ, թափ տվեց իրեն, տոկաց, փլված շինություններից իրեն փայտյա, կրկաթյա, քարե տնակ-հոկիներ պատրաստեց, ապրեց... ու մարտում է առ այսօր: Եվ երբ ժողովրդական ուժերը հաղթանակեցին, հրքովեց... «փառք քեզ աստված, մի դուր ծածկում ես, մյուսը՝ բացում, մեր ծոցից ելածները մեզի կփրկեն»: Ավագ, հիմա նրանցից ոմանք աղետի գոտի ոտք չղրած, ազետ շտեսած, արցունքի համը շառած՝ սրբազան սուգն էլ են արգելում, թե պիտի աշխատեց զեկտեմբերի 7-ին: Ողջ կուսակցիցի սզվոր է ու զործանող՞ում պիտի սգա... Այդ օրը եկեք, մտեք գերեզմանոց, չեք տեսիլ ստապանք, մորմար, տեսեք ամբողջովին մարած օջախներ, որոնց վրա սզում են հարևանները, տեսեք սրտանաք մայրեր, հայրեր, պապ ու տատեր, երկնահաս ողբեր:

Կուսակցիցի աշխարհաշեն է, իր աշխարհը կրկին կրկառուցի ու կհիշի իրեն ձեռք մեկնողներին: Ազետի գոտին հիշվում է լուկ, օտարերկրացիներին ցույց տալու համար, որ խղճահարուստներ առաջացեն և օգնություն աղերսեն: Յուրաձմեռ է, ամեն ինչ պակաս: Հիմա կուսակցի ծանր վերավոր է, հզոր տեր չունի, օգնողներ չկան, որ ոտքի կանգնի, ոմանք էլ ավելի են խորացնում նրա վերքերը. պակաս է գազը, էլ նկատվելով դրան, կրճատված հեռուստատեսության ծրրագիրը: Մակայն կուսակցի քաղաք էր ու էլի կզատնա մեծ քաղաք: Նա գիտե փոխհատուցել բարեգործությունը: Ահա օրինակը:

Պատերազմը վերջացել էր, ուրախության հեռանկանայի կորուստների պատճառով մահն էլ ավելացավ, արտեր ու հայրամանքն էլ: Ժողովուրդը դարձյալ մարտուման մեջ էր, այդ ժամանակ կուսակցիցի վարպետները շրջեցին քաղաքից-քաղաք, գյուղից-գյուղ, հույսոված մարդկանց ապրելու հույս ներշնչելու կուսակցու ֆիլհարմտիան Միլանի երգն ու պար տարավ կոսի: Հրավիրված ու հայտարարված էին: Հյուրանոցում կրծքներին սեղիկ դիմանկարով մարդիկ են ներկայանում ու խնդրում համույթի զեկավարին իրենց այցով ու նվագով մի փոքր թեթևացնել: Մայրական ազնիվ երիտասարդներից մեկի հարազատների վիշտը, որը պատահականորեն վախճանվել էր այդ օրը: Մաղոխներ անմիջապես երկու շաբաթաշրջվեցին հետևում է նրանց: Սցում էր ողջ քաղաքը, բայց ողբաձայն ընդհատվեց զուգուկի մեղեցիկներով: Մաղոխներ արցունքն աչքերին ու մորմար սրտում երեք ժամ անընդհատ իր նվագով ամբողջ հարազատներին: Իր առջև սեղանին կիսոված հազարավոր սուրբներին ձեռք չափեց, դուրս ելավ առնելով. «Ըստ եկեղի վիշտ ամբողջում, իմ հարգանքը մատուցելու զոհված երիտասարդի հիշատակին: Այդ զուամբն իմ կողմից նրան արժանի շիրմաքար պատրաստեցեր»:

Այո, կուսակցիցի աշխարհին է, այլոց վիշտ չկա, այլոց ցավ չկա, նա հասնում է, օգնում, տանջվում, անզամ անծանոթի համար: Բայց այսօր թեթևափ է նա, ուզում է ոտքի կանգնել, վեր բարձրանալ, կրկին ապրել, օգնող չունի: Կուսակցիցի սրտին անամոք վերքեր ու սպիներ, դարձյալ մատուման յուրաքանչյուր պահին ասում է. «Թող ժողովրդական խորհրդարանին համերաշխություն, հեռուստատեսություն ու հաշտություն լինի, մենք էլ կտուկանք ու կապրենք հույսով»:

Շիրակի ժողովուրդ, աշխարհաշեն կաներից գրո տար, կուսակցի կառուցիր, ու նորից արարժան շողեր սփռեր: ՀՐԱՆՏ ՍԱՐԳՍՅԱՆ



ԷԼՄԻՐԱ ԱՎՈՅԱՆ, ԳԱՐԵԳՈՆ Ե ՏԻԳՐԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐ

Ծնվել է 1961 թվականի հունիսի 29-ին: Ավարտելով անգլիական թեոլոգիական գրգւրոցը, ընդունվում է կուսակցի նախնական անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Գեո 3-րդ կուրսում նրա աշխատանքը բարձր գնահատվեց ուսանողական գիտական նստաշրջանում: Ինստիտուտն ավարտեց գերազանց գնահատականներով:

Ք 20 դպրոցի պարժանքն էր՝ բարձր վարժող-փայլուն գնահատականներով:



ՄԱՐՏՈՒՆ ՄՅԱՆՆԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ծնվել է 1982 թվականի մարտի 21-ին, Լեհիմակամում: Ավարտել միջնակարգ դպրոցը, աշխատանքի անցել Լեհիմակամի կոշիկի ֆաբրիկայում: Ամուսնացած էր: Մարտունը և ուներ մի երեխա՝ որի հետ մեծ հույսեր էր կապում: Օրինակելի հայր էր լավ ամուսին, հիմանալ ընկեր: Սիրում էր մայրիկանց, ընտանեկան տաք օջակ:



Նա՞ն՝ ծաղիկներ: Ու տխրում էր ակամա, երբ տեսնում էր թռչունի ծաղիկներ: 26-ամյա, մտքովն էլ չէր անցնում, որ իր ծաղիկ կյանքն էլ թռչնելու է համարժակի՝ կիսատ թողնելով քաղաքն երազանքներ ու նպատակներ:

ՀՐԱՆ ԵՎ ԿԱՐՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ
Ծնվել են 1955 թվականին, Լեհիմակամում: Երջանիկ ընտանիք էին կազմել ու ապրում էին

րով, խոնարհ բնավորությամբ, հպարտ կեցվածքով: Հրաշալի ասմունքում էր և ուներ բազմաթիվ զովասանագրեր:

Կյանքով առեցուն էլ-միթան երջանիկ նստաեիք էր կազմել: ՏԻԳՐԱՆԻԿԻ ծնունդը անափ ուրախությամբ էր լըցրել ամուսինների և մերժավորների սիրտը: 1988 թվականի նոյեմբերի 25-ին լրբայցով որդու մեկ տարին, ազատ քայլում էր: Բայց, ավագ, սե ճակատագիր դանակի երկրաշարժը մանուկը գրկին խլեց նոր ծաղկած մոր ու մանկան կյանքը, սկեսրայրի հետ միասին:

Սկեսրայրը՝ ԳԱՐԵԳՈՆ ՏԻԳՐԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ, ծնված 1932 թ., հմուտ վարպետ էր: Աշխատում էր միկրոէլեկտրաշարժիչների գործարանում: Հիանալի խառատ էր, հարգված գործընկերների շրջանում և լավ ընտանիքի հայր էր:

Աշխատանքային ընդմիջմանը վարպետ Գարեգինը տուն էր գնացել թոռնիկին տեսնելու և ավերիչ երկրաշարժին անմեղ զոհ դարձավ: Հարսին ու թոռնիկին փաթաթված Հաղթանակի պողոտայի Մ 44 շենքի Մ 125 բնակարանում:



ՊԱՏՄՈՒՄ Է ՍՎԵՍՏՈՐԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐԸ ԱՊՊԱ ՅԱՅԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ծնվել է 1965 թվականի հուլիսի 19-ին Լեհիմակամում: Բարձր ստաջանիտությանը ավարտել է Վախաճ Տերյանի անվան միջնակարգ դպրոցը և Մոսկվայի անվան մանկավարժական ուսումնարանը: Անյամ ավագ դուստր էր և ավագ հարս, վեղեցիկ էր, համատ, խելացի: Գեղեցիկ էր նաև հոգով, գործունյա էր, խոնարհ ու սիրոված: Ամեն ինչին գիտակից վերաբերմունք էր դրսևորում: Երջա-

նիկ էի, բայց ուրախություս թերի մնաց, դաժան ճակատագիրը նրան խլեց մեզանից: Զոհվեց տանը, ծաղիկ հասակում:

ԱՐՄԵՆՈՒՇԻ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ասաջին թոռնիկ էր: Ծնվեց 1984-ի օգոստոսի 28-ին: Երսզյում էի աղջիկ թոռնիկ ունեցավ և ունեցա: Ասես աշխարհի չափ երջանկություն պարգևեցին ինձ: Բայց կորցրի թանկ գնով պահած բալիկս: 1985 թվականի սեպտեմբերի 10-ին ծնվեց երկրորդ թոռնիկս՝ ԱՆԱ ԳՐԻԳՐՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ: Այլաս շի-

կահեր էր, գանգուր մազերով, խելացի ու համատ: Կարծես նոր քաղված ավան ծաղիկ լիներ, այնքան որ գեղեցիկ էր: Այդ դաժան օրը գրկվեց նաև Այլայիցս:

1988 թվականի մայիսի 1-ին ծնվեց տղա թոռնիկս՝ ԱՐՏԱԿ ԳՐԻԳՐՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ: Կրկնապատկեց մեր ուրախությունը: Ընդամենը 87 օր ապրեց: Եվ մենք Արտակիցս գրկվեցինք ընդմիշտ: Գոհեն չտեսանք անմեղ ծիծաղը, առաջին հընչյունները, որ պիտի արտաքին...



ՊԱՏՄՈՒՄ Է ՀԱՐՍԸ

ԼՆԱՆ ՄԱՐԻՆԵՎԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՄԱՐԻԱՄԻԿ ԵՎ ԿԱՐԵՆ ԶՈՒՂՈՅԱԼՆԵՐԻ

Գեղեցիկ էր Լնան, հրձիղ... Իր աննման հայացքով, իր չերմոթյամբ զերում, հմայում էր նույնիսկ անձանոթին: Հարգված, սիրված էր, ուներ իսկական մարդուն հատուկ ամենավսեմ հատկանիշները: Զգալի ընտանիքի սիրտը, գեղեցիկ, անկրկնելի ձայնը մարդկանց կարծես կախարդում էին: Չէր կարող անտարբեր անցնել նրա կողքով: Ինչպես իսկական հայ կնոջ է վայել, հմուտ անտեսուհի էր Լնան: Այդ սարսափելի օրը ասան էր իր երկու անձեղ զավակների հետ: Սովորական նման, այդ ժամին նա զբաղված էր համեղ ճաշ պատրաստելով, սակայն...

Այո, ամբողջ կյանքում



հավատարիմ մնաց իր ամուսնուն, իր երեք բախկենքին... Բայց ճակատագիրը տարավ ոչ միայն նրան, այլև նրա հրաշամանուկներին՝ 12 տարեկան ՄԱՐԻԱՄԻԿին և մեկ տարեկան ԿԱՐԵՆին, որը նորևոր էր թոթովում իր առաջին բառը՝ «մա-մա»:

Ինչպես, այս ինչպես մուսնամ նրան՝ իմ Լնային, իմ ամենամա, ամենահավատարիմ ու ազնիվ զրոջը՝ ՄԱՐԻԱՄԻԿ ՄԿՐՏՉԻ ԶՈՒՂՈՅԱՆԸ ծնվել էր 1977 թ. մարտի 10-ին: Սովորում էր № 23 միջն. դպրոցի 4-րդ դասարանում:

...Տան էր, սովորականի նման պատրաստվում էր դպրոց գնալ: Հազնվեց, կապեց վզկապը, սանդեց մագեղը և, աստված իմ, այս ի՞նչ կատարվեց... Վազեց մոր մոտ, և միասին էլ գրեցին անհետ ու անվերադարձ...

ՍՈՑՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՆԱԻՐԱ ԻՌԻՐԻԿԻ ՀԱՐՈՒՔՅՈՒՆՅԱՆ

Ծնվել էր 1974 թ. հունիսի 1-ին, Լենինականում: Սովորում էր Կիրովի անվան (№ 2) դպրոցի 8-րդ դասարանում: Խոստովնայից աշակերտուհի էր նաև № 6 երաժշտական դպրոցի 6-րդ դասարանում:

Մանուկ նախնան երբմե հպարտությամբ թոթովում էր, թե երեխաների պաշտպանության օրն է ծնվել: Նրա մոր սիրտը մի տեսակ հանգիստ հրճվում էր, թե ինքնին պաշտպանված է նաան:

Հարագաները որոշեցին աղջնակի հետ եկող (1989-ի) հունիսի 1-ին, ըննությունից հետո նրա ողջ դասարանով իրենց տանը հավաքվել ու տոնել երեխաների ու իր նախնայի ծննդյան օրը... Սպասում էին մայր ու աղջիկ, բաղձանքով սպասում այդ օրվան...

Մայրը սպասում էր նաև հիմա՝ աչքը ճամփին, ախառնը՝ գանգին, սպասում էր, որ պայմանավորված ճակատին համաձայն երաժշտական դպրոցից պիտի գան գի նախնան՝ մոր հօգու աբն ու երազանքների ապունքը, պիտի գանգի, որ մի...ին...ի գնան... Սպասում է...



ՊԱՏՄՈՒՄ Է ՄԱՅՐԸ

ՆԱԶԱՏՐՅԱՆ ԱՂՈՒՆԻԿ ՎԱՐԳԵՍԻ

... Փյատակների տակ միայն էինք... Ես փարվել էի նրան, որ համարը չվանտի: Իսկ նա... հույս էր տալիս ինձ, «Զվախենաս, հիմա պապան կգա»... Հետո հաց, «Մա, տես լույսը, լույսը...»: Ու երկնային լույսին ձուլվեց իմ լուսն բաղիկը: Ճրագահացիները փյատակները մարրեցին 7-րդ օրը, արդեն ուշ էր...

Իմ սիրելի բայ, հավերժ 3 տարեկան իմ ամենը Աղունիկ, վիշտս անախ է, կարոտս անհագ: Ամենուր ես քեզ եմ փրցնում, քո ձայնն եմ լսում: Ամեն ինչով յուրահատուկ էիր, զարմանալիորեն խելացի ու ուշիմ: Բոլորը քեզ փալցում սպազա էին գուշակում: Ապագադ սևով ներկվեց, բայցա...

- Հիշում եմ, այն սև օրից 2-3 օր ատաջ ձյուն եկավ: Կայեցանայեց երկինք ու հարցրեց, որտեղից է գալիս...
- Երկնից...
- Իսկ այնտեղ ո՞վ կա...
- Աստված...
- Այնտեղ լավ է, ես գնալու եմ աստծո մոտ ապրել...
Ու գնաց երկինք, հավերժ ընկնու գնաց իմ ձյունն թագուհին...



ՍԱՄԵԼ ԽԱՉԻՈՒ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Այս գեղեցիկ երիտասարդը ծնվել է 1963 թվականի հուլիսի 23-ին: Միջնակարգ կրթությունը ստացել է № 12 դպրոցում, ապա 1981 թվականին գոբալտչիկ խորհրդային բանակ: Բաճակից վերադառնալով, աշխատանքի է անցել Զվարթնիսի Կարի ֆարքիլայում, որտեղ աշխատում էին նաև հայրն ու քույրը: 1986 թվականի դեկտեմբերյան մի օր Սամվելը գրտավ իր կյանքի ընկերուհուն՝ Հասմիկին: Երջանիկ ընտանիք կազմեց: Իսկ երբ ծնվեց ատաջ անկր՛ փոքրիկ Հերմինեն, նոր խինդ ու ուրախություն պարգևեց ծնողներին: Թվում էր՝ ամեն ինչ լավ է դասախորվում, ղեկտեմբերի 30-ին տոնելու էին իրենց ամուսնության երկու տարին, բայց... Ամռանի աղետին գոհ գնաց Սամվելը, չհասցրեց գրկել, փայլալույս ու մեծացնել իր Հերմինենին: Կանցնեց տարիներ, Հասմիկը կատարի դըստերը հայրիկի սև ձկնիկի մասին, որին այդպես էլ չհասկացավ Սամվելը: Մի՛ լար, որքուկ, դու դեռ փոքր ես, քո կյանքը դեռ ասցնում է, նակատագիրը դեռ կծպտա քեզ: Եակատագիրը չխնայեց քո հայրիկին, դու կըմեծանաս ու նրա հիշատակը վատ կախես քո սրտում:



ՂՈՒՎԱՍ ՀԱՐՈՒՔՅՈՒՆՅԱՆ

Հիմա, երբ գրում եմ քո մասին, ակամայից սիրտս սկսում է տրոփել ուժգնորեն: Նայում եմ քո նկարին, և դու ծպտում ես ինձ քո անընկալունիկ ծախտով: Ինչքան էիր սիրում կյանքը, դու իմ սիրելի որդի Ղուկասիկ, ինքդ էլ կյանք էիր, արևաշող մի մամուլ: Հիմա էլ դեռ իմ մատները զգում եմ քո խարտոյաչ մագերի փափկությունը, քո այտերի ջերմությունը: Հիշում եմ ինչպիսի խանդավառությամբ էիր համախում ղրգրոց՝ (Արտյոմ Պետրոսյանի ան

վան № 10), չկասկածելով անգամ, որ դեկտեմբերյան մի դժնդակ օր կիլվի այն, դառնալով քո մատաղ հոգու վերջին հանգրվանը: Փվոզ դպրոցի պատերի հետ փլվեցին սրտիս դարպասները, փյատակվեցին հույսերս: Ինչքան երազանքներ, ինչպիսի հույսեր ունեիր իմ հոգյակ, և ինչ կույր է բնույթուր, որ իվեց կյանքը քո, և իմ կյանքն էլ դարձրեց անհմաստ ու գորշ: Եվ ինչքան գերում, ինչքան խոսում եմ քո մասին, կենդանանում ես ուկեշող իմ մամուլ՝ հավերժ 18 տարեկան:



ԵՂՄԱՅՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՒՅՐԸ

ԳՎԻԱԽՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳՈՒՆԷՐԸ

Ֆրանսիայում բնակվող հայերի մշակութային միության գլխավոր ֆառտուղար ԺՈՐՃ ՍԱՐՅԱՆ

— Անդրկովկասում տեղի ունեցած երկրաշարժը միայն ամբողջ խորհրդային ժողովրդի վրէժաբ է: Երբ ես իմացա, որ Մ. Ս. Քորբաչովը որոշում է բնգուել ընդհատել իր այցը Նյու Յորք և վերադառնալ հայրենիք, անկեղծորեն շնորհակալ եղա իրորհրդային ղեկավարին՝ Գորախտովյան պահին իր ժողովրդի հետ լինելը յուրաքանչյուր մարդու բնակած հոտումն է, որը չի կա

րելի շողջունել: Մենք՝ ֆրանսահայերս, ողբում ենք տարեբային աղետի անմեղ գոհորին: Բայց արջուները թույլ միթիարանք է անսևուց և անօթեան մնացած մարդկանց համար: Կոնկրետ օգնություն է պետք, և այն իրեն սպասեց նեկ շտվեց: Ամբողջ Ֆրանսիայում հայերը հավաքում են հաղուստ, ղեղորայք, առաջին անհրաժեշտության առարկաներս նատերն արղեն

արյուն եւ հանձնել՝ հուսալով փրկել տուժածների կյանքը: Ոչ մի կերպ չեմ կարողանում պատկերացնել, թե մի այնպիսի գեղեցիկ բաղաբ, ինչպիսին Լենինականն է, փլատակների է վերածվել: Ես Լենինականը տեսել եմ արևային և ծաղկուն: Գրանցյալ տարվա ապրիլին էր: Այն ժամանակ թվում էր, թե այդ քաղաքը հավիտենական է... Ոչ, չեմ կարող հավատալ, որ գեղեցկությունը անհնար է վերածնել: Մարդիկ ի գորու են ամեն ինչի, երբ գործին միասնաբար են կրպչում:

ԱՐՏԱԿ ԵՎ ԱՐԿԱԽ ԻՎԱՆԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆՆԵՐ

Ծնվել են 1979 թվականի ապրիլի 6-ին գարնանային մի պաշտու օր, գարնանային շունչ հառողղելով ճնողներին: Սովորում էին № 15 դպրոցի 3-րդ դասարանում: Ծարպիկ էին, աշխույժ, արագաշարժ, բայց երբ ցնցվեց երկրի ընդերքը, արագաշարժությունն էլ չօգնեց նրանց... Երկվորյակ եղբայրներն միասին եկան, միասին էլ հեռացան այս աշխարհից: Նրապիկատ էին ու զգայուն կյանքի ինդուլության սուղեցում, իրենց ներկայությանը ու հնարամիտ կատակներով ստիպում էին ծպտալ յուրաքանչյուրին, սիրում, նկատում ու գնահատում էին գեղեցիկը: Երազում էին օդաչու դառնալ և միասին սավառնել անձայրածիր երկրն քում: Տակավին մանուկ պարապում էին տարբեր մարզաններով, կոփում իրենց կամքն ու բնավորությունը, ավաղ, չաբազույժ աղետը վերջակետ դրեց նրանց բոլոր երազանքներին: Սիրելի Արտակ և Արկախի, չկա մի օր, որ ձեզ չիխնն ու չկարոտեն հայրդ ու մայրդ, ձեր բոլոր հարագատները:

ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՑՆՑՈՒՄ

ԽՈՍՏՈՒՄ Է ՈՒԹԵՆՆԵՐ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐԻԱՆ 31 ՎԱՐՄԶ, ՊՐՈՑԵՍՈՐ Ե. ՇԵՐՈՒՆԸ

— 1902 թվականից ի վեր, երբ տեղի ունեցավ Շամախիի երկրաշարժը, Կովկասում և Անդրկովկասում չեն եղել երկրակեղևի ցնցումներ, որոնք համեմատվել են երկրաշարժի ցնցումների հետ:

Երկրաշարժի օջախում, որը գտնվում է երկրի ընդերքում՝ Լեհիճակա-նից մոտավորապես 20 կիլոմետր հեռավորության վրա, ցնցումների ուժգնությունը հասավ 7,0 միավորի:

Միևնույն ժամանակում, որտեղ 1988 թ. 12-ին 18-19 պակաս, 12-ին 18-19 պակաս, — Մա է ժամը Հայոց երկրաշարժի, Անեղ դատաստանի օրը, ժամը եզրված է նիշտ, Գրանգված է ստույգ...

Մինչև Գրոգնի: Այժմ ամենասուրբից մեկը չցնցումների կրկնության հարցն է: Ստույգ կասեմ, որ դրանք կրկնեն արբեր ուժի, բայց գրեթե հաստատա՞վելիք բայ: Սարափիլի ավերածություններ է հասցրել առաջին ցնցումը: Իսկ հաջորդները, որոնք տեղի ունեցան առաջին օրվա ընթացքում (հաշվել են թվով 21 ցրե-

ցում), լրացուցիչ վնասներ չեն հասցրել: Ցնցումները կարող են շարունակվել, բույանալով, մի քանի ամիս շարունակ:
Ռատի չի հանձնարարվում գտնվել ֆանդիված շինություններում:
(«Կոմսոմոլսկայա սրբազան» թերթի սեփական թղթակցների հարցումներից)

ՀԱՅՈՑ ՊՈՄՊԵՅԸ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

Կա՛ն վայրկյաններ միայն, եվ դարձնել է դարձնել սպանդանոց... Իսկ ես փլատակի վրա բառաշարում եմ՝ երեխաներին փառասկանների տակ... Մի ֆանի ֆայլ զենք՝ հողին հավասարված, Ինձ է նայում տունս՝ մեռած-լառած... Ու բոլորը ինձ հետ հող ու ֆար են ճանկում Ու բոլորը ինձ հետ արանում են... Բահում, մայրի վրա՝ Անեղ, արյունլիկ մանուկ-տատրակների շարքեր երկարում են...

Բայց չկան ու չկան, Գառիկներս չկան... Վայրկյանները դար են, Վայրկյանները դար են, Ու այդ դարերը սև կանգ են առել, Վայրկյան-դարերը սև ֆարացի են Գույադեհների ֆարթիկայի աշտարակի ժամացույցի վրա — 12-ին 18—19 պակաս, 12-ին 18—19 պակաս, — Մա է ժամը Հայոց երկրաշարժի, Անեղ դատաստանի օրը, ժամը եզրված է նիշտ, Գրանգված է ստույգ... Կյանքն ու մահը մեկտեղ ճանկում են ֆարը, Խելահարույս, խելահարույս, խելահարույս — ճանկում են հողը անհույս-հույսով մարդիկ... Եվ կտրված, հողը ու արյունս՝ Ես գտնում եմ երկու դարիկներին... Մեկին գրեկս եմ առել, Մեկին շայակելի եմ, Բայց թե մեկս չկա — Շիրակումս չկա, Երկու ժամ է անցել Շիրակումս չկա... Մանուկ մահամիկներ, Մանուկ մահամիկներ,

(Շարունակելի)



ՅԼՈՐԱ ՄԵԼՔՈՒԻ ԹԵՐԶԱՆՅԱՆ



ՄԱՂՈՒՍՅԱ ԱՎԱԲԵՆԻ ՍՈՒՔԻԱՅԱՆ



ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ծնված 1960 թ.)

Ծնվել է 1933 թվականին Եգիպտոսի Կահիրե քաղաքում: 1962 թ. ընտանիքով հայրենադարձվել է Հայաստան և աշխատանքի անցել մեր քաղաքում: Աշխատանքային ընկերներն այսօր էլ շերտությամբ են հիշում «Բանվոր» թերթի արխիվի կարգապահ ու ճշտակատար աշխատակցուհուն: Մշտաձգիտ դեմքով, պատրաստակամ, քնքուշ ու բարի անձնավորություն էր Ֆյոբան: Ինչով կարող էր, օգնում էր մարդկանց: Օգուսկար խորհուրդներ էր տալիս ընկերներին, եթե նրանք բողոքում էին ա-

Ծնվել էր 1923 թվականին Ղուկասյանի շրջանի Հարթաշեն գյուղում: Ծանր էր եղել նրա կյանքի տարիները: Անհոգ ճակատագիրը իր ղեկավարություններով հանդերձ եղբոր և համր քրոջ խնամքը նույնպես դրել էր նրա ուներին: Սակայն Մարուսյան ուժեղ կամք ուներ: Հաղթահարելով բոլոր ղեկավարությունները նպատակին հասցրեց ճան քրոջը: Մարուսյա Սուքիասյանը հինգ երեխաների մայր էր, աշխատանքի վետերան: Նա նրկար տարիներ աշխատել է գույա-նասկեղենի արտադրական միավորումում:

ողջական վիճակից, սկսանքն ինձ համերատարությամբ բացատրում կարի կամ հյուսելու գաղտնիքները: Նա օրինակելի ընտանիքի սիրված մայր ու կին էր: Դժվար է ընտանիքում առանց Ֆյոբայի և միանգամայն հասկանալի է, երբ ամուսինը՝ Հարություն Թերջանյանը, ամեն անգամ մտահոգությամբ արտաբերում է. «Ֆյոբային այդ չպիտի պատասխար»... Երիտասարդ կինն աշխատավայրում իր գործընկերների հետ ամենակույ երկրաշարժի գոհը դարձավ:

Անավոր երկրաշարժի օրը նա իր բնակարանում էր: Առափույս վաղ արթնանալով թունանը՝ Ժենյային ստիպելով ուղարկում է դասի, զգուշացնելով, որ «ապագա մանկավարժը պարտաճանաչ պետք է լինի»: Նրա սիրտը կարծես վառ բան էր գուշակել: Զուգեցավ, որ թոռնիկը տանը մնա: Այդպես էլ եղավ: Սարատիեի երկրաշարժը հազարավորների հետ միասին քանդեց նաև նրանց Յ հարկանի շենքը, փլատակներ ի տակ թողնելով Մարուսյա Սուքիասյանին:



ԳՈՂԱՐ ԻՎԱՆԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ (ԳՆՎՈՐԳՅԱՆ)

Ծնվել է 1968 թվականի փետրվարի 25-ին, Լեհիճակում: Սովորել է Մ. Արմենի անվան № 34 դպրոցում, այնուհետև Ախտրյանի պրոֆեսիոնալ մանկապարտեզում: Միջին Գոճար, անշափ ուրախացար, երբ ծնվեցին երկվորյակ եղբայրները, այդ ժամանակ ընդամենը 11 տարեկան էր, բայց սիրով՝ օգնում էր մայրիկին եղբայրներին մեծացնելու: Երեխային հիշողությունները ամբողջով շատ էր սիրում եղբայրներին, որ Հայրական անունը նրանց հետ միասին կենցաղի մասկանացուցի: Երեքուրդ երեխայից էր սպասում, ավազ շաքերը նրա հիշում: Երկրաշարժից մեկ ամիս առաջ երազ էր տե-



սել, երկրաշարժ էր, քարերը թափվում էին երկնքից, սար սափի ճիշով արթնացել և դուրս էր փախել: Քեզ համար էին, որ դա երազ է: Ավազ, երազը իրականացավ՝ կտրելով քո եղբայրիկի և գիտես լույս աշխարհ չեկած մանկիկի կյանքի թելը, ծր նողմերից թողնելով անհուն վշտի մեջ: Իմ փոքրիկ, անուշիկ, ԷԴ-ԳԱՐ, ծնվեցիր ուրախություն պատճառով՝ ծնողներից: Երբ էր լրացել քո մեկ տարին, որ նոր էիր սկսել առաջին քայլերդ, հողը ամուտ էիր գտնում ստրեթիկ տակ: Ավազ, երբ բաց այդ հողը, կտրեց քո մատուց կյանքը, չհասցրեցիր ճանաչել աշխարհը: Այժմ ճանաչում ես անուշիկ մայրիկիդ գրկում, վշտի մեջ թողնելով հարազատներիդ:



ՍՈՒԿ ԵՎ ՑՈՒԱԿ

Կար, սպրտում էր այս համեստ և երբեմնի ուրախ ընտանիքը, երջանիկ՝ երեք երեխաներով: Հիմա ընտանիքից բացակայում են ամուսինները, իսկ երեք երեխաները ապրում են սիրելի ձկողների կորստյան անհուն վիշտը սրտերում, ապրում՝ Երջանից քաղցր հիշողությամբ: Բնուսի տված Սոնա և Ցուակ անուսինները, հաղթահարելով քաղցում ղեկավարություններ, մեծացրին իրենց զավակներին և ժամանակ էր՝ ուրախանալու նրանց երջանկությամբ, հաջողություններով: Երջանիկ էին հավարում իրենց, ամուտ ընտանիք, ուր իշխողը սերն ու հարգանք էր միմյանց նկատմամբ: Միանգամայն խորտակվեց այդ երջանկությունը և ամուսինները՝ անտեսյակ միմյանցից, իրենց աչքերը հավիտյան փակե-



ԱՂԱՄՅԱՆՆԵՐ

ցին աշխատավայրերում: Սոնան ծնվել էր 1936 թ., ավարտել է 6 միջն. դպրոցը և աշխատում էր Զկալովի անվան կարի արտադրական միավորումում: Ամուսինը՝ Ցուակ Սուրենի Աղամյանը ծնվել էր 1932 թ. դեկտեմբերի 31-ին, ավարտել է 1 միջնակարգ դպրոցը, բուկզբնական շրջանում աշխատել կոշիկի վերամրոգման արհեստանոցում, ապա՝ Լեհիճակի կոշիկի ֆաբրիկայում որպես ձևարար: Սիրված և բարեխիղճ աշխատող էր: Երկրաշարժի անձեղ գոհեր, Ցուակ և Սոնա, գիտե՞ք, որ մեր միմուսար որդին՝ Լուիկը, այս օրը, խելագարի նման փնտրում էր մեզ, խելագարի նման վազում գործարանից գործարան ու սպասում հրաշքի՝ մեր վերադարձին: Զվերադարձաք...

ԽՆՈՒՍՅԱՆՆԵՐԸ



ձան դաժան արհամարհանքի, մոր հետ միասին Սիրասուն զավակները հազիվ էին բուրբիլ իրենց կյանքի 3 և 4 զարուհները:

Այլևս չկա գեղեցկազնև և բարձրահասակ, բարի ու քնքուշ մայրը՝ իր զավակների հետ: Այլևս չեն ծրայալու նրանց գարուն աչիկները և մայրը՝ տիկին Սուսաննան ամեն օր պիտի սպասի սիրելի աղջկա և կուռնիկների վերադարձին, որոնք ուրախ աղմուկով էին լցնում հայրական օջախը:

Ավաղ, չկան ու չեն գալու նրանք: Գարձան մի-մի քաղցր ու անմոռաց հուշ, որ հավիտյան պիտի զգացնել տա հարազատների սրտում:

ՀՈՂԻՎ ՍԵՐՅՈՒՅԻ ԽԸՆՈՒՍՅԱՆԸ ծնվել է 1963 թվականի ապրիլի 3-ին, Կումայրիում: Սովորել է Քուսանյանի անվան միջնակարգ դպրոցում, ապա՝

հաշվապահական դասընթացներում: 4 երեխայի մայր է եղել: Երկուսը մինչև երկրաշարժն էին մահացել, մյուս երկուսը՝ ՍԱՔՈՆ և ԴՈՒԻԿԸ զոհ դար-



ՀԱՅԿՈՒՆ ԹՈՐՈՍԻ ԹՈՐՈՍՅԱՆ

Ծնված 1955 թ. Անիկա-կան քաղաքում: Բարի ու

մարդամոտ աղջիկ էր մեր Հայկուշը: Աշխատում էր գույպայի արտադրական միաժողովում: Եր լավ բնավորության, շերտ և հոգատար վերաբերմունքի շնորհիվ նա վաշխում էր ինչպես աշխատանքային ընկերների, այն պես էլ մտերիմների, հարե՛վանների ու ընկերուհիների սերն ու հարգանքը:

Երբեք չէր մերժում, երբ որևէ հարցով զիմում էինք իրեն: Գոհ էր մնում ինքն իրենից, երբ կարողանում էր օգտակար լինել մտերիմնե

րի համար: Ամուսնացած չէր: Սիրում էր կյանքն իր հետաքրքրություններով: Ազնուի զոհ դարձավ աշխատանքի վայրում:

Երկրաշարժից հետո հարազատները տեղափոխվեցին արտասահման՝ աղջկա կորստյան վիշտը սրտերում:

Քող «Հիշողության» այս համարը, ուր զետեղված է Հայկուշի լուսանկարը, լինի մի սուրբ մասունք մտղեն իր համար և վերջին հիշատակ իրենց սիրելի աղջկան:

ՎԱՐՍԻԿ ԱՆՏՈՆՅԱՆ



ՊԱՏՄՈՒՄ Է ԲՈՒՅՐԸ



ԺԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ «Երբ կորցրածիդ համար փորձում եմ սփոփել քեզ, զգում եմ, որ չեմ սփոփում, այլ լայիս եմ ես էլ...» Ի՛նձ էլ սփոփել է պետք: Կարծես ինձ համար ես զբոյլ այս տողերդ, սիրելի իմ բույր, ու թե որքան իրավացի եմ խոսքերդ, հիմա եմ միայն զգում ու հասկանում, հիմա, երբ զու այլևս չկա, իսկ ես... Ես քո կորստից հետո փորձում եմ սփոփել մեր ծնողներին, հարազատներին, երեխաներիդ: Փորձում եմ ուժերի գերազույն լարումով, վիշտը կոկորդուս սեղմած, բայց... ինչպե՛ս, ինչպե՛ս, երբ Գոգարանը ամեն օր արևածագն է դիմավորում առանց ժաննայի, երբ զրպրոցում այլևս չի հնչում տնօրեն ժաննա Հովհաննիսյանի հոգեհարազատ ու զրավիշ ձայնը, երբ... Փոխարենը այսօր մի լուռ շիրմաբար, շուրջը շուրջ՝ փոքրիկ հողաբլուրներ. աշակերտներդ են, որոնցից մահն էլ չբաժանեց քեզ: Որքան էիր սիրում նրանց, զարցոց ու... զյուզի դժվարին, բայց հետաքրքիր աշխատհր: Գարոցի աշխատանքից զուրս քո ձեռքերի տակ շունչ էր առնում հողը, կանաչն ու ծաղիկը, աշխատանքից մեզած գեղեցիկ զգացումներն ու հույզերը քո նրբազգաց հոգում կամաց-կամաց, հողում թաղված հունդի պես ծիլ էին տալիս, վերածվում բանաստեղծությունների: Սրբաթի ինչ թրթրո՞ւմ էիր սպասում անդրանիկ գրքիդ լույս ընծայմանը, բայց... Զհասցրիր տեսնել: Հիմա քանաս տեղում թյուններիդ անդրանիկ ծողովածուն՝ «Երբ մաքարի պես լուռ է երեկոն», որպես սուրբ մասունք ա՛մենուր ինձ հետ է: Թեթևում եմ էշերը ու... տողերի տակ փնտրում քեզ: Կիրքդ լուռ հանգչում է հիմա շիրմաքարիդ վրա, որի պես առանց քեզ լուռ ու տխուր

են երեկոները քո հայրենի գյուղում, քո երբեմնի տաք ու կանչող օջախում:

ԱՆՆՏԱ ՀԵՆՐԻԿԻ ԱԹՈՅԱՆ (ծնված 1974 թ.):

Քումանյանի հերոսուհին էր ասես՝ հեղ, խոնարհ, ա՛մոթխած, Մոր՝ ժաննայի աչ թն էր, առաջին օգնականն ու ընկերուհին: Բավական էր ժաննայի մի հայացքը, որ Աննտան հասկանար նրա միտքը ու միանգամից զործի անցներ: Գործույթն ու աշխատանքը Աննտան Զ-րդ դասարանում էր սովորում: Այդ օրը զրպրոց չէր գնացել ու մորն էլ հորգորում էր չգնալ՝ «Տե՛ն է, դաս շունչներ» բառերը անընդհատ կրկնելով: Բայց գնաց, որովհետև մայրը զրպրոցից կանչել էր նրան: Քիչ ժամանակ էր անցել, երբ սկսվեց... Սկզբում՝ չգիտեմ որ կողմը վազել՝ մայրիկի՛, 8-րդ դասարանում սովորող եղբոր՝, թե հայրիկի, որն այդ պահին պատմություն էր դասավանդում: Հասցրեց միայն ա՛հարեկված ու իրենց անունները ճշացող մորը փաթեթավելու ու... Փլատակներից հրաշքով փրկված Հենրիկ ու Վրե՛մ Աթոյանների ականջներում դեռ հնչում են ժաննայի ու Աննտայի հեռագհատ հանգչող ձայները: Ո՛չ, նրանք օգնություն չէին աղերսում, այլ փյուտակների տակ տնքացող Վրե՛մի փրկությունն էին աղերսում:

Սիրելի Աննտա, երկար հյուսքերով հրաշք աղերիկ, դու էլ հեռացար կյանքից անժամանակ, մինչդեռ աշխարհ էիր եկել, մայրիկնիդ իսկ խոսքերով ասած՝ «Ժի՛մազելու, անհոգ մեծանալու, երկնքում միայն աղափններ տեսնելու համար...»:

ՕՐՍՄԿԱ ԱԳԱՍՅԱՆ



ԽԵՆԱՆ: Վիբարուժության համամիութենական կենտրոնի մասնաճյուղը: Այստեղ են աշխատել ԳՅՀ-ի բժիշկները:

ԱՆԻԿԱԿԱՆ: Հույսալիկություն:



ԿՎԻԲԱՐԵՐԵՑԻՆ ԿԵՍ ԱՄՍՎԱ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Մայր Հայաստանում ղեկավարների 7-ին տեղի ունեցած աննախադեպ երկրաշարժից տուժածներին օգնություն ցույց տալու, ավերածությունները վերացնելու և վերականգնման աշխատանքներ ծավալելու համար աղետալիների օգնություն ֆունդին իրենց նվիրատվություններն են կատարում մարզի գրադարաններն ու գրադարանային համակարգի

աշխատողները: Գյուղական յուրաքանչյուր գրադարան իր փոխանցած գումարն ունի բեղհանուր հաշվում: Ստեփանակերտի Մ. Գորկու անվան մարզային գրադարանի կույնկախի որոշել է ղեկավարներն ամսվա 15 օրվա աշխատավարձը փոխանցել օգնության ֆունդին:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂԱՐԱՔԱՎ», ղեկավարներ, 1988 թ.